Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ ԹԻՎ 334-Ա ԵՎ 336-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 334-Ա որոշման վերանագրում նշված «ԹԻՎ 195-Ա ԵՎ» թվից և բառերից հետո անհրաժեշտ է գրառել «2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի» թվերն ու բառերը, իսկ որոշման բովանդակությունում գրառված «ստորաբաժանման» բառը փոխարինել «ստորաբաժանում» բառով: Բացի այդ, որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ և 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին:

Թիվ 336-Ա որոշման 1-ին կետում գրառված «114362.0» թիվն անհրաժեշտ է փոխարինել «126362.0» թվով, իսկ «113183.0» թիվը փոխարինել «125183.0» թվով:

Որոշման 2-րդ կետում «տողի» բառից հետո անհրաժեշտ է գրառել նաև ««առաջին եռամսյակ» սյունակում գրառված «6800.0» թիվը փոխարինել «5800.0» թվով,» թվերը և բառերը, իսկ «4729 հոդվածի» թվից և բառից հետո գրառել «առաջին եռամսյակում գրառված «5000.0» թիվը փոխարինել «4000.0» թվով,» թվերը և բառերը:

Որոշման 3-րդ կետում «տողի» բառից հետո անհրաժեշտ է գրառել նաև ««առաջին եռամսյակ» սյունակում գրառված «32000.0» թիվը փոխարինել «33000.0» թվով,» թվերը և բառերը, իսկ «4511 հոդվածի» թվից և բառից հետո գրառել՝ «առաջին եռամսյակում գրառված «25000.0» թիվը փոխարինել «26000.0» թվով,» թվերը և բառերը:

Բացի այդ, որոշման 3-րդ կետում գրառված «77500.0» թիվն անհրաժեշտ է փոխարինել «75500.0» թվով, իսկ «80708.0» թիվը փոխարինել «78708.0» թվով:

Որոշման 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում գրառված «Աշխատավարձեր և հավելավճարներ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» բառերով:

22.07.2022 թ.